ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 07.03.2018թ. ԹԻՎ 192-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ 20 ապրիլի 2018թ.
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 15:30

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Մարկոսյան ԲԴՀ կենտրոնի ղեկավար

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Ա.Աղաջանյան ԲԴՀ կենտրոնի ավագ ինժեներ

Գ. Չաքրյան ԲԴՀ կենտրոնի 1-ին կարգի ինժեներ

Հանձնաժողովի բացող անդամներ՝

Յու. Իվանով ԿԾ ՌԿ ղեկավար

Ա. Սարգսյան ՕԿԲ առաջատար ինժեներ

Հանձնաժողովի քարտուղար

Գ. Սարգսյան ՊԳՀԾ գնման համակարգող

Օրակարգ՝

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ կարիքների համար <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-24/18>> ծածկագրով <<Կահույք>> ապրանքախմբում ներառված ապրանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփում՝ համաձայն գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկների

Հանձնաժողովի նախագահը տեղեկացրեց, որ gnumner.am կայքում հրապարակվել է «Ռեֆորս Տեխնոլոջի» ՍՊԸ կողմից առ 30.03.2018թ. <<ԳԲԽ-ԷՍ-2017/51>> ծածկագրով բողոքի վերաբերյալ ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի 18.04.2018թ. որոշումը:

Համաձայն նշված որոշման, «Ռեֆորս Տեխնոլոջի» ՍՊԸ կողմից առ 30.03.2018թ. <<ԳԲԽ-ԷՍ-2017/51>> ծածկագրով բողոքը թողնվել է առանց քննության, հիմք ընդունելով նշված ընկերության՝ բողոքն առանց քննության թողնելու առ 18.04.2018թ. միջնորդությունը:

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ ստացվել են <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-24/18>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված ՀՀ ՊԵԿ հարցման պատասխանը և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներից պահանջվող, հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրները, որոնք արտացոլվել են գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկներում:

Քննարկումների արդյունքում ***հանձնաժողովը միաձայն որոշեց***.

1. Չկայացած հայտարարել <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-24/18>> ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 8-րդ և 9-րդ չափաբաժինները,
2. <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-24/18>> ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել.
   - 11-րդ չափաբաժնով՝ «Ռեֆորս Տեխնոլոջի» ՍՊԸ-ին,
   - 7-րդ չափաբաժնով՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ին,
   - 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 13-րդ չափաբաժիններով <<Արգավանդ Կահույք>> ՍՊԸ,
   - 3-րդ չափաբաժնով՝ «Սենդա» ՍՊԸ-ին,
   - 10-րդ և 12-րդ չափաբաժիններով <<Իքս-Արթ»>> ՍՊԸ-ին:

3. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին օրենքով սահմանված կարգով տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Կից ներկայացվում են <<ԳԲԽ-ԷՍ-2017/51>> ծածկագրով բողոքի վերաբերյալ ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի 18.04.2018թ. որոշման պատճենը և գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները:

Գ. Մարկոսյան		Հանձնաժողովի նախագահ
Ա.Աղաջանյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Չաքրյան		Հանձնաժողովի անդամ
Յու. Իվանով		Հանձնաժողովի անդամ
Ա. Սարգսյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Սարգսյան		Հանձնաժողովի քարտուղար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 18.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/51

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը հիմք ընդունելով «Ռեֆորս Տեխնոլոջի» ՍՊԸ-ի 30.03.2018թ. ներկայացրած N ԳԲԽ-ԷՍ-2017/51 ծածկագրով բողոքն առանց քննության թողնելու մասին 18.04.2018թ. միջնորդությունը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ռեֆորս Տեխնոլոջի» ՍՊԸ-ի կողմից 30.03.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ